Հավելված N 3
ՀՀ կառավարության 2016 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1367- Ա որոշման

[«Իրավական հուշագրի» առաջարկվող ձևաչափ
2010թ. Ընտրողական կապիտալի համալրման և Ընդհանուր կապիտալի համալրման շրջանակներում բաժանորդագրված բաժնեմասերի համար]

«Իրավական հուշագիր»

1. Հայաստանի Հանրապետությունը որոշել է բաժանորդագրվել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (այսուհետ՝ Բանկ) բաժնետիրական կապիտալի 160 հավելյալ բաժնեմասերին, որոնք բաշխվել են «Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների ձայնի իրավունքը և մասնակցությունը Կանոնադրական կապիտալում ապահովելու համար 2010թ. Ընտրողական համալրման մասին» Կառավարիչների խորհրդի թիվ 612 Որոշման համաձայն և բաժանորդագրվել 347 հավելյալ բաժնեմասերին, որոնք բաշխվել են «2010թ. Ընդհանուր կապիտալի համալրման մասին» Կառավարիչների խորհրդի թիվ 613 Որոշման համաձայն (երկուսը միասին՝ Որոշումներ):
2. Յուրաքանչյուր որոշման 3-րդ (f) պարբերության համաձայն՝ անդամ պետությունները պետք է որոշակի քայլեր ձեռնարկեն լիազորություն ձեռք բերելու և հավելյալ մասնաբաժիններին բաժանորդագրվելու ուղղությամբ: Սույն «Իրավական հուշագրի» նպատակն է ներկայացնել անդամ պետության կողմից ձեռնարկվող քայլերը նմանատիպ բաժանորդագրումների նկատմամբ իրենց պարտավորություններն իրականացնելու առնչությամբ:

Անդամ պետության օրենքին համապատասխանող պահանջները

3. **Բաժանորդագրում:** Հայաստանի Հանրապետությունը լիազորված է բաժանորդագրվելու հավելյալ մասնաբաժիններին՝ համաձայն ստորև նշվածի.

Ա. [Ծանոթագրություն անդամ պետության համար. խնդրում ենք այստեղ ներկայացնել համապատասխան օրենքները, կանոնակարգերը և ընթացակարգերը հավելյալ բաժնեմասերը բաժանորդագրելու համար:]

Բ. [Ծանոթագրություն անդամ պետության համար. խնդրում ենք կցել գործող այն սահմանադրական դրույթների և օրենքների պատճենները, որոնք լիազորում են նմանատիպ հավելյալ բաժնեմասերի բաժանորդագրումը:]

4. **Վճարումը:** Հայաստանի Հանրապետությունը լիազորված է վճարումներ կատարել հավելյալ բաժնեմասերի առնչությամբ, ներառյալ՝ այնպիսի բաժնեմասերի մասնաբաժինների առնչությամբ, որոնք ցպահանջ են և այն գումարը, որը պետք է վճարվի բաժնեմասերի՝ ազգային արժույթի մասնաբաժնի արժեքը պահպանելու նպատակով, եթե կա այդպիսին, համաձայն ստորև նշվածի.

ա. [Ծանոթագրություն անդամ պետության համար. Խնդրում ենք այստեղ ներկայացնել համապատասխան օրենքները, կանոնակարգերը և ընթացակարգերը բաժնեմասերի առնչությամբ վճարումների կատարելու համար:]

բ. [Ծանոթագրություն անդամ պետության համար. Խնդրում ենք կցել համապատասխան օրենսդրության փաստաթղթերի պատճենները:]

<u>Անդամ պետության իրավական պահանջների բավարարումը</u>

5. Հավելյալ բաժնեմասեր բաժանորդագրելու և վերջիններիս դիմաց վճարումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն վերոնշյալ պահանջները բավարարված լինեն:
6. Սույն հուշագրին ուղեկցող Բաժանորդագրման ձևաչափի փաստաթուղթը ստորագրվի (անուն, ազգանուն) (պաշտոն) կողմից, ով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության լիազորված ներկայացուցիչն այս հարցում:
7. Հայաստանի Հանրապետությունը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ քայլերը՝ Բանկի «Համաձայնագրի հոդվածներով» սահմանված իր պարտականություններն իրականացնելու համար և Որոշումների համաձայն՝ բաժանորդագրված բաժնետրիական կապիտալում լրացուցիչ բաժնեմասերի առնչությամբ:

8. Երբ վերոնշյալ համապատասխան օրենքների և կանոնակարգերի պատճենները կցվեն սույն Հուշագրին:
9. Ներքևում ստորագրողը Հայաստանի Հանրապետության իրավաբան է, ով լիազորված է իրավաբանական կարծիք ներկայացնել վերոնշյալ հարցերի կապակցությամբ:

Ստորագրություն
Այն անձի անունը և պաշտոնը, ով լիազորված է իրավաբանական եզրակացություն ներկայացնել Կառավարության գործողությունների մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ